

Համաձայն «ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ
Վարչության 20.08.2025 թվականի որոշման



**FACEPASS-AMIO ԴԵՄՔՈՎ ՎՃԱՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ, ՔԱՐՏԻ ԿՑՄԱՆ
ԵՎ «ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ ԿՈՂՄԻՑ ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ
ՊԱՅՄԱՆՆԵՐ**

«ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Նալբանդյան 48
Հեռ: (374 10) 592020, (374 60) 37-25-00
info@amiobank.am

**«ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ FACEPASS-AMIO ՀԵՌԱՀԱՐ ՀԱՐԹԱԿՈՒՄ ԴԵՄՔԻ
ԿԵՆՍԱԶԱՓԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ԵՎ ՔԱՐՏԻ ԿՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ**

Ծառայության բնույթը.

1. ԱՄԻՕ Բանկի (հետայսու՝ Բանկ) FacePass-AMIO հեռահար հարթակը (հետայսու՝ Համակարգ) հնարավորություն է տալիս նախապես գրանցվել Համակարգում, պահպանել դեմքի կենսաչափական տվյալները և դրան կցել բանկային քարտ հետագայում դեմքի նույնականացման միջոցով վճարումներ կատարելու համար (այսուհետ՝ Ծառայություն):
2. Համակարգում Դուք կարող եք կատարել անձնական հաշվի՝ օգտատիրոջ գրանցում էլեկտրոնային փոստի և Ձեր կողմից նախընտրելի գաղտնաբառի մուտքագրման միջոցով:
3. Ձեր կողմից տրամադրված տվյալների հիման վրա Բանկը կկատարի տվյալների հավաքագրում և կգրանցի Ձեր տվյալները Բանկի տվյալների բազայում դեմքի նույնականացման միջոցով վճարում կատարելու համար, որի դեպքում վճարման համար գումարը կելքագրվի նախապես կցված բանկային քարտից:

Ծառայության էական պայմանները.

4. Համակարգին հնարավոր է կցել ԱՄԻՕ Բանկի կամ այլ բանկի /ՀՀ կամ ոչ ՀՀ/ (այսուհետ՝ Թողարկող բանկ) Mastercard AMD, USD, EUR, RUB արժույթներով քարտեր (բացառությամբ Բանկի բիզնես և մանկական քարտերը):
5. Քարտը կցելիս քարտի իսկության ստուգման նպատակով տվյալ քարտից կգանձվի 100 ՀՀ դրամ, որը հետ կփոխանցվի հաշված թույլտվությունների ընթացքում:
6. Քարտի կցման իրականացման անվտանգությունն ապահովելու համար կիրառվում է 3D Secure տեխնոլոգիան (Mastercard Secure Code)՝ Բանկի սահմանած կանոններին համապատասխան՝ Թողարկող բանկի կողմից քարտապանին տրամադրված միանգամյա գաղտնաբառի մուտքագրմամբ:
7. Քարտը կցելուց հետո քարտի տվյալները կպահվեն Բանկի տվյալների բազայում դրա հետագա օգտագործումն ապահովելու համար:
8. Համակարգին թույլատրվում է կցել 1 հատ քարտ: Այլ քարտեր կցելու համար նախ անհրաժեշտ է հեռացնել նախկինում կցված քարտը:
9. Կցված քարտի ծածկագրված տվյալները արտացոլվում է Բանկի Համակարգի Գլխավոր էջում:

10. Կցված քարտով հնարավոր է կատարել անկանխիկ վճարումներ FacePass-AMIO վճարման հնարավորություն ունեցող ՀՀ տարածքում գործող առևտրի և սպասարկման կետերում:
11. FacePass-AMIO վճարման հարթակի միջոցով կատարված գործարքները հավասարազոր են քարտով կատարված գործարքներին:
12. Քարտի նկատմամբ կիրառվող սակագները, սպասարկման պայմանները և քարտի օգտագործման կանոնները կարգավորվում են Ձեր և քարտը թողարկող բանկի միջև կնքված պայմանագրի շրջանակներում:
13. Բանկի կողմից չեն գանձվում որևէ լրացուցիչ միջնորդավճարներ քարտը Համակարգում գրանցելու, այլ գործողություններ իրականացնելու և FacePass-AMIO վճարման հարթակի միջոցով վճարումներ իրականացնելու համար:
14. Եթե կցված քարտի արժույթը տարբերվում է վճարման արժույթից, ապա փոխարկման գործարքը կատարվում է կցված քարտը Թողարկած բանկի կողմից՝ համաձայն վերջինիս կողմից սահմանված պայմաններին:
15. Բանկն իրավունք ունի մերժել քարտի գրանցումը կամ օգտագործումը քարտը բլոկավորված լինելու, զեղծարարության կասկածների և այլ դեպքերում:
16. Ձեզ հետ կապ հաստատելու համար Բանկը կարող է կիրառել ցանկացած հասցե/կապի միջոց/հեռախոսահամար, որը Դուք նշել եք Համակարգում գրանցման ժամանակ:
17. Համակարգում գրանցման, Համակարգ մուտք լինելու կամ գրանցված տվյալների փոփոխման դեպքում Ձեր ինքնության ստուգման համար Բանկն իրավունք ունի Ձեզ ուղարկել էլեկտրոնային փոստի կամ SMS հաղորդագրության միջոցով գաղտնաբառեր/կոդեր:
18. Բանկն իրավունք ունի պահանջել Համակարգում ստեղծել գրաֆիկական գաղտնաբառ (PassKey) Ձեր հայեցողությամբ FacePass-AMIO վճարման հարթակի միջոցով վճարման պահին գործարքի հաստատման համար:
19. Բանկն իրավունք ունի մերժել վճարման գործարքը.
 - 1) ոչ արժանահավատ տեղեկատվության տրամադրման դեպքում,
 - 2) դեմքի կենսաչափական նույնականացման ստուգում չանցելու՝ վճարման պահին լուսանկարված դեմքի և նախապես Համակարգում գրանցված դեմքի անհամապատասխանության դեպքում,
 - 3) Բանկի/ծառայության այլ պայմաններին չբավարարելու դեպքում:
20. Գործարքի չեղարկման դեպքում, համաձայն ծրագրատեխնիկական լուծման, Վաճառակետ աշխատակիցը դրամարկղի ծրագրում կատարում է գործարքի չեղարկում: Որից հետո գործընթացը իրականացվում է համաձայն քարտային գործարքների ստանդարտ չեղարկման դեպքում գործող ընթացակարգի:

Ձեր պատասխանատվությունը.

20. Դուք կրում եք պատասխանատվություն Ձեր քարտը Համակարգում գրանցելու, գրանցված քարտով իրականացված վճարումների, գործարքների համար, ինչպես նաև այնպիսի տվյալների գաղտնիության պահպանման համար, որոնք հնարավորություն են տալիս օգտագործել քարտը կամ Համակարգը, ինչպիսիք ենք հասանելիությունը Համակարգին, SMS հաղորդագրության միջոցով ուղարկված գաղտնաբառերին և այլն:

21. Դուք պարտավոր եք անմիջապես տեղեկացնել Բանկին Համակարգում գրանցված քարտի միջոցով գործարքներ կատարելու հնարավորության բլոկավորման անհրաժեշտության մասին, եթե.
- կորցրել եք քարտը,
 - կորցրել եք սարքավորումը, որին ստանում եք գաղտնաբառեր,
 - Համակարգին հասանելիությունը /օգտագործման տվյալները/ հայտնի է դարձել կամ կարող են հասանելի դառնալ երրորդ անձի:
22. Դուք նաև պարտավոր եք անմիջապես տեղեկացնել քարտը Թողարկող բանկին քարտի բլոկավորման անհրաժեշտության մասին:

ԱՆՁՆԱԿԱՆ ԵՎ ԿԵՆՍԱՀԱՓԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ ՄՇԱԿԵԼՈՒ ԾԱՆՈՒՑՈՒՄ և ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ

Սույն անձնական և կենսաչափական տվյալներ մշակելու ծանուցումն ու համաձայնությունը (հետայսու՝ Ծանուցում-համաձայնություն) տրամադրվում են համաձայն «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի (հետայսու՝ Օրենք): Անձնական և կենսաչափական տվյալներ մշակող կամ Բանկ՝ «ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ, հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Նալբանդյան փողոց, թիվ 48:

Բանկի հեռահար հարթակում սույն Ծանուցում-համաձայնությանը ծանոթանալով և «V» թռչնանշանի լրացմամբ հավանություն տալով, Դուք հաստատում եք, որ տեղեկացված եք սույն Ծանուցման-համաձայնությանը և տալիս եք համաձայնությունն առ այն, որ Բանկը մշակի Ձեր անձնական և կենսաչափական տվյալները, այն է՝ անուն, ազգանուն, հեռախոսահամար, կենսաչափական տվյալներ (դեմք, մատնահետք և այլն), որոնք հնարավորություն են տալիս ուղղակի կամ անուղղակի կերպով նույնականացնել հաճախորդի ինքնությունը համաձայն Օրենքի:

Ձեր անձնական և/կամ կենսաչափական տվյալները մշակվելու են՝ Ձեր կողմից Ծառայությունից օգտվելու՝ անկանխիկ վճարումներ կատարելու, հետագայում Բանկի կողմից մատուցվող ծառայություններից օգտվելու, Բանկի կողմից անցկացվող ակցիաների/առաջարկների/այլ ծառայությունների վերաբերյալ տեղեկատվություն ստանալու նպատակով:

Անձնական և կենսաչափական տվյալների մշակման համաձայնությունը տրվում է Օրենքի համաձայն Ձեր անձնական և/կամ կենսաչափական տվյալների հետ այնպիսի գործողություններ կատարելու համար (հավաքագրում, ամրագրում, մուտքագրում, համակարգում, պահպանում, օգտագործում և այլն), որոնք անհրաժեշտ են սույն Ծանուցման-համաձայնության մեջ նշված նպատակներին և օրենսդրությամբ Բանկի վրա դրված պարտականությունների կատարմանը հասնելու համար:

Ծանուցում-համաձայնությանը Բանկի հեռահար հարթակում «V» թռչնանշանի լրացմամբ հավանություն տալով՝ Դուք թույլատրում և լիազորում եք Բանկին առցանց նույնականացման ու գործարքների կատարման նպատակով Ձեր անձնական և կենսաչափական տվյալները փոխանցել «Sumsab» ընկերությունների խմբին առնչվող կազմակերպություններին, որոնք պարտավոր են իրականացնել համապատասխան տեխնիկական և կազմակերպչական միջոցառումներ՝ ապահովելու անձնական և կենսաչափական տվյալների անվտանգությունը՝ սույն Ծանուցում-համաձայնության մեջ նշված նպատակներին հասնելու համար:

Անձնական և կենսաչափական տվյալների մշակման համաձայնությունը համարվում է Ձեր կողմից տրված Ծանուցում-համաձայնությանը ծանոթանալով և «V» թռչնանշանի լրացմամբ հավանություն տալով, և Բանկը ստանում է Ձեր անձնական և կենսաչափական տվյալները մշակելու իրավունք՝ սույն Ծանուցում-համաձայնության մեջ նշված նպատակներով, ինչպես նաև «Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի համաձայն Բանկի հետ համագործակցող/Բանկին ծառայություններ մատուցող/Բանկի համար աշխատանքներ կատարող կազմակերպություններին տրամադրելու նպատակով՝ պայմանով, որ դա անհրաժեշտ է տվյալ ծառայությունները մատուցելու կամ աշխատանքները կատարելու համար և/կամ բոլոր այն դեպքերում, երբ այդ տվյալների մշակման պահանջն ուղղակիորեն սահմանված է օրենքով:

Սույն Ծանուցում-համաձայնությունը համարվում է տրված նաև վերոնշյալ տվյալների աղբյուր հանդիսացող հիշատակված մարմինները վերանվանվելու, վերակազմակերպվելու կամ այլ մարմիններով/աղբյուրներով փոխարինվելու դեպքում, եթե սույն Ծանուցման-համաձայնության հիման վրա ստացման ենթակա կամ տրամադրվող տեղեկատվության ծավալը մնում է նույնը:

Ձեր կողմից Ձեր անձնական և կենսաչափական տվյալների մշակման մասին համաձայնության գրավոր հետ կանչման, կամ անձնական և/կամ կենսաչափական տվյալների ուղղում կամ ոչնչացում (եթե անձնական և/կամ կենսաչափական տվյալներն ամբողջական կամ ճշգրիտ չեն կամ հնացած են կամ ձեռք են բերվել անօրինական ճանապարհով կամ անհրաժեշտ չեն մշակելու նպատակներին հասնելու համար) կատարելու պահանջ ներկայացնելու դեպքում: Բանկը պարտավորվում է դադարեցնել Ձեր անձնական և/կամ կենսաչափական տվյալների մշակման գործողությունները կամ ուղղել կամ ոչնչացնել Ձեր անձնական և/կամ կենսաչափական տվյալները տասն աշխատանքային օրվա ընթացքում, եթե Ձեր և Բանկի միջև առկա չեն չկատարված պարտավորություններ և/կամ բացակայում են գործող պայմանագրային հարաբերություններ, այլապես Ձեր և Բանկի միջև պայմանագրային հարաբերությունները ենթակա են դադարեցման՝ դրանից բխող բոլոր բացասական հետևանքներով: Ձեր անձնական և կենսաչափական տվյալների մշակման մասին համաձայնության հետ կանչման կամ Ձեր անձնական և/կամ կենսաչափական տվյալների ոչնչացում պահանջելու դեպքում Ձեր անձնական և/կամ կենսաչափական տվյալները դադարում են մշակվել Բանկի կողմից, սակայն դրանք պահպանվում են տեղեկատվական արխիվում և կարող են օգտագործվել միայն օրենսդրությամբ նախատեսված դեպքերում: Համաձայնության հետ կանչը հետադարձ ուժ չունի:

Անձնական և կենսաչափական տվյալների մշակման համաձայնությունը տրվում է կենսաչափական տվյալների միջոցով վճարումներ կատարելու նպատակով և շարունակում է գործել Ծառայության մատուցման ողջ ժամանակահատվածի համար, իսկ օրենսդրությամբ սահմանված դեպքերում՝ այդ դեպքերի համար սահմանված ժամանակահատվածի համար:

Սույն համաձայնությունը համարվում է տրված նաև վերոնշյալ տվյալների աղբյուր հանդիսացող վերոնշյալ մարմինները վերանվանվելու, վերակազմակերպվելու կամ այլ մարմիններով/աղբյուրներով փոխարինվելու դեպքում, եթե սույն համաձայնության հիման վրա ստացման ենթակա կամ տրամադրվող տեղեկատվության ծավալը մնում է նույնը: